

Պատմագիտական ժառանգություն

Լյուսիեն Ֆևր

ՀԱՆՈՒՆ ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Համատեղ հետազոտությունները և պատմության ապագան\*

Առաջաբան

19-րդ դարավերջի-20-րդ դարասկզբի պատմագիտական միտքը կանգնած էր պատմական անցյալի ու ներկայի ուսումնասիրման նոր մեթոդների ձևավորման հիմնախնդրի առջև: Ձևավոխավել էին մարդու և հանրայթի մասին այլ գիտությունների հետ պատմագիտության ունեցած փոխհարաբերությունները: Հարկ եղավ վերանայել ողջ հասկացութենական համակարգը, հին տեսությունները փոխարինել նորերով: Արդյունքում՝ ուրվագծվեցին հնարավոր ուղիները, կարևոր քայլեր ձեռնարկվեցին մարդկության մասին նոր գիտական հարացույցի մշակման ճանապարհին: Այս համընդգրկուն փոփոխությունների մեջ իր ծանրակշիռ ներդրումն ունեցավ «Աննալների» դպրոցը, որում նշանակալի է **Լ. Ֆևրի** պատմագիտական ժառանգությունը<sup>1</sup>:

*Լյուսիեն Ֆևրը (Lucien Paul Victor Febvre) ծնվել է 1878 թ. հուլիսի 22-ին, Նանսիում: Նրա հայրը բանասեր էր, և նա Լյուսիենին ուղղորդեց հին լեզուների ու տեքստերի ուսումնաստությանն ու հետազոտությանը, որոնք էական նշանակություն ունեցան նրա հոգեմկրավոր կայացման*

\*«Պատմագիտական ժառանգություն» և «Գրականագիտական ժառանգություն» խորագրերի տակ հրատարակվող ուսումնասիրությունները նպատակ ունեն Հայաստանի գիտնականներին ծանոթացնելու արդի գիտության այն տեսական ու մեթոդաբանական սկզբունքներին, որոնց որդեգրումը խիստ անհրաժեշտ է՝ հայագիտությունը խորհրդային մտակաղապարներից և վերջերս դրանց գումարվող գավառական թմբիից ձերբազատելու համար: Խմբ.: Ընդունվել է տպագրության 4.12.2012:

1 Լյուսիեն Ֆևրի պատմագիտական հայացքների մասին ավելի մանրամասն տես **Ս. Հովհաննիսյան**, Աննալների պատմագիտական դպրոցը: Լյուսիեն Ֆևրի և Մարկ Բլոկի պատմության տեսությունը, «Վեմ» համահայկական հանդես, Գ (Թ) տարի, 2011, թիվ 2 (34) ապրիլ-հունիս, էջ 95-118:

Գ (Ժ) քաարի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012  
ՎԷՄ համահայկական հանդես

գործընթացում:

Զինվորական ծառայությունից հետո, քսան տարեկանում մեկնում է Փարիզ, որպեսզի սովորի «Բարձրագույն մանկավարժական դպրոցում», ուր մասնագիտանում է պատմության և աշխարհագրության բնագավառում: Ուսումնառությունն ավարտելուց հետո Լ. Ֆերը երկրի ծայրամասային դպրոցներից մեկում դասավանդելու հետ միասին նախաձեռնում է իր «Ֆրիլայ II և Ֆրանշ-Կոնրեն» մենագրությունը: Այս ժամանակ էլ (1906 թ.) համագործակցում է **Անրի Բերի** հետ՝ «Պատմական համադրությունների հանդեսի» շրջանակներում:

1911 թ. պաշտպանում է իր գիտական թեզը՝ **Գաբրիել Մոնոյի** ղեկավարությամբ, իսկ 1912 թվականին նշանակվում է Դիժոնի համալսարանի պրոֆեսոր, դասավանդում է Բուրգունդիայի պատմությունն ու արվեստը: 1914 թ. զորակոչվում է բանակ, մասնակցում Առաջին աշխարհամարտին: Զորացրումից անմիջապես հետո (1919 թ.) աշխատանքի է անցնում Սպրասբուրգի համալսարանի «Արդի պատմության» ամբիոնում: Այստեղ էլ նույն թվականին ծանոթանում է **Մարկ Բյոկի** հետ: **1922 թ.** հրատարակում է իր «Երկիրը և մարդկային հանրությունների բարեշրջությունը» հեղազոտությունը, որտեղ մեկնարկելով **Վ. Դը լա Բլաշի** «մարդկային հանրությունների աշխարհագրություն» հարացույցից, հակադրվում է այդ ժամանակներում լայնորեն տարածված դեպրեմիսիզմի տեսությանը՝ պատմագիտություն ներմուծելով «հնարավորության» հղացքը:

Այս շրջանում մասնագիտանում է 14-րդ դարի պատմության մեջ: Խորամուխ է լինում «կոլեկտիվ մրաձողության» վերլուծությանը: Արդյունքում 1928 թ. հրատարակում է իր հանրահայտ «Մի ճակատագիր. Մարտին Լյութեր» հեղազոտությունը, որը համալսարանական շրջանակներում մեծ աղմուկ է հանում: Այդ ուղղությամբ նրա հաջորդ խոշոր հեղազոտությունը «Անհավատության հիմնասխեմայի XVI դարում: Ռաբլեի կրոնը» գիրքն էր (1942 թ.):

1929 թ. Սպրասբուրգում Մ. Բյոկի համախմբագրությամբ հրատարակում է «Տարեգրություններ փնտրեսական և ընկերային պատմության» հանդեսի առաջին համարը: Դրանով սկսում է ձևավորվել «Աննայների» պատմագիտական դպրոցը:

1933-ին աշխատանքի է անցնում Քոլեժ դը Ֆրանսում: Ակտիվ արեղծագործական աշխատանքները շարունակվում են մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը: 1944 թ. գոհվում է Մ. Բյոկը: Սակայն դա պատճառ չի դառնում հանդեսի ընդհատմանը: Լ. Ֆերը շարունակում է այն հրատարակել «Տարեգրություններ. Տնտեսություններ, Հասարակություններ, Քաղաքակրթություններ» խորագրով:

Պատերազմից հետո՝ 1949 թվականին, հիմնում է «Բարձրագույն գիլդիաների Գործնական դպրոցի Վեցերորդ բաժանմունքը», որը մեծ խթան է դառնում հեղազոտական նոր մտքեցումների մշակման և դասավանդման առումով: 1953 թ. հրատարակում է իր հանրահայտ «Մարտեր հանուն պատմության» հոդվածների ժողովածուն:

Անդամակցել է Ֆրանսիական ինստիտուտին («Բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիա»), եղել է Ֆրանսիայի պատմաբանների

ազգային կոմիտեի ներկայացուցիչ, Երկրորդ աշխարհամարտի պայմանության կոմիտեի պրեզիդենտ, Ֆրանսիայում կրթության վերամշակման ծրագրերի հանձնախմբի անդամ, ՅՈՒՆԵՍԿՕ-ում ֆրանսիական պայքամավորության անդամ, «Հարորներ համաշխարհային պայմանության» հանդեսի խմբագիր, «Երկրորդ աշխարհամարտի պայմանության հանդեսի» հիմնադիր, «Դիմադրության ոգին» գիտական խորհրդի անդամ, «Ֆրանսիական հանրագիտարանի» ղեկավար: Մահացել է 1956 թ. սեպտեմբերի 26-ին, Սենտ-Անտուան:

Լ. Ֆերն իր հետազոտական գործունեությունը սկսել է որպես աշխարհագրագետ: Ավելի ուշ հետազոտության գիտաթեման դարձրել է մինչարդիական և նոր դարերի Եվրոպայի պատմությունը՝ նշանակալի տեղ հատկացնելով Վերածննդի մշակույթին ու պատմական հոգեբանությանը:

Նրա առաջին մենագրության մեջ՝ «Ֆիլիպ II-ը և Ֆրանս-Կոնտեն»<sup>2</sup>, արդեն առկա էր հարակից կրթանքների հետազոտական մեթոդների միջոցով պատմությունն ամբողջացնելու և ընդհանրացնելու մոտեցումը: Դա մի փոքրիկ շրջանի՝ Ֆրանս-Կոնտեի պատմությունն էր հընթացս Կարլ V-ի (1516-1555) կառավարման անցումային լարված պայմանների, որոնց հետևանքով գահը հանձնվեց նրա որդի Ֆիլիպ II-ին (1555-1598): Այս հետազոտության առանցքը դեռ քաղաքական պատմությունն էր, բայց Լ. Ֆերը հետազոտական դաշտ էր ներբերում հասարակական և կրոնական բախումների հիմնախնդիրը՝ մասնավորապես շեշտը դնելով բնական-աշխարհագրական միջավայրի և մարդկային հանրույթների փոխհարաբերությունների վրա: Ուստի Լ. Ֆերը հետազոտում էր ոչ միայն Նիդերլանդների հակաիսպանական ապստամբությունները (1566 -1609 թթ.) և բացարձակ միապետության կայացումը, այլև երկու ընկերային դասերի՝ ազնվականության և բուրժուազիայի «կատաղի» պայքարի պատմությունը<sup>3</sup>:

Նա համադրում էր մի կողմից ընկերային, տնտեսական և քաղաքական կառույցների և մյուս կողմից՝ աշխարհագրական միջավայրի, մշակույթի, մարդկանց մտակեցվածքների ու վարքի բարդ կապերն ու փոխազդեցությունները: Լ. Ֆերի այս հետազոտության մեջ արդեն տեսնում ենք հասարակական դասերի և խմբավորումների բախումների, աղքատության, «մարդկանց գերածի», գների տատանումների, բնական աղետների (1584-1585 թթ. ժանտախտը), ֆեոդալական կարգերի քայքայման և բուրժուազիայի բարձրացման պատմությունը: Գլխավոր դերակատարը մարդն է. «Մարդու մասնակցությունը տիրապետող է: Նա պետք է կոփի իր երկիրն ու դրա քաղաքական ամբողջությունը»<sup>4</sup>:

Լ. Ֆերի գիտական գործունեության առաջին շրջանի մյուս նշանավոր աշխատությունը դեռ Առաջին աշխարհամարտից առաջ նախաձեռնած

2 L. Febvre, Philippe II et la Franche-Comté. Étude d'histoire politique, religieuse et sociale, Paris, Honoré Champion, 1911, Rééd. 1970. Ֆրանս-Կոնտեի վերաբերյալ Լ. Ֆերը ունի ևս երկու մենագրություններ՝ *Idem*. Notes et documents sur la Réforme et l'Inquisition en Franche-Comté, Paris, 1911, *Idem*. Histoire de Franche-Comté, Paris, 1912.

3 Տե՛ս Լ. Febvre, Philippe II et Franch-Comté ..., op. cit., p. 9.

4 *Ibid.*, p. 30-31.

«Երկիրը և մարդկային հանրույթների բարեշրջությունը»<sup>5</sup> հետազոտությունն է, որի ենթավերնագիրը՝ «Պատմության աշխարհագրական ներածություն», արդեն իսկ խոսում է թեմայի մեջ աշխարհագրական գործոնի առանցքայնության մասին: Այն գրվել էր Ա. Բերի «Մարդկային հանրույթների բարեշրջությունը» ծրագրային մատենաշարի համատեքստում և վերաբերում էր մարդկության «նախապատմությանն» ու հին շրջանին: Հետազոտությունը նորից նվիրված էր մարդկային հանրույթների վրա աշխարհագրական միջավայրի ազդեցության հիմնախնդրին: Հաջող փորձ էր կատարվում համադրելու «մարդկային հանրույթների աշխարհագրություն» (լարլաշականություն) և «հասարակական ձևաբանություն» (դյուրկհայմականություն) հոլացքները: Այդ հետնախորքի վրա Լ. Ֆերը կարողացավ հետազոտական նոր դաշտ ձևավորել ակադեմիական սահմաններից դուրս: Դա նրան թույլ տվեց կատարելու համընդգրկուն համադրություն<sup>6</sup>: Ըստ նրա՝ համադրական պատմության ծիրում է հնարավոր աշխարհագրության և ընկերաբանության երկխոսությունը<sup>7</sup>: Լ. Ֆերը փորձում էր ցույց տալ, որ պատմության մեջ «ամեն ինչ կապակցված է, բայց ոչինչ մեկնաբանված չէ»<sup>8</sup>: Նա հակադրվում էր գերմանական աշխարհաքաղաքական դպրոցին և «մարդկային աշխարհագրության» հիմնադիրներից մեկին՝ Ֆ. Ռատցելին, որը մարդկության (և մարդկանց) ձակատագրում բացարձակացնում էր աշխարհագրական միջավայրի դերը: Այս կապակցությամբ Լ. Ֆերը շեշտում էր, որ միանման աշխարհագրական միջավայրերը պատմության մարտահրավերներին կարող են տալ տարբեր պատասխաններ: Ամեն ինչ կախված է մարդկային (և հասարակական) գործոններից<sup>9</sup>: Այլ խոսքով՝ Վ. դը Լա Բլաշի աշխարհագրական հայեցակարգը Լ. Ֆերի համար հիմք էր՝ իրականացնելու դինամիկ և բաց հետազոտություն, որի ծիրում ուրվագծվում էին միջկրթանքային երկխոսությունները:

Նույն մոտեցմամբ է Լ. Ֆերն անդրադառնում նաև «մտակեցվածքների պատմությանը»: Նրա համար կարևոր են նաև «պատմության հոգեբանական տվյալները»<sup>10</sup>: Մտակեցվածքի և հոգեբանության համադրության արդյունք դարձան «Մի ձակատագիր. Մարտին Լյութեր»<sup>11</sup> և «Անհավատության հիմնախնդիրը XVI դարում. Ռաբլեի կրոնը»<sup>12</sup> մենագրությունները: Առաջինը նվիրված էր XVI դարի առաջին կեսին գերմանական հասարակության և Մարտին Լյութերի միջև առաջացած լարվածությանն ու ռեֆորմացիայի հիմնախնդիրներին: Իսկ մյուսը՝ XVI դարի մարդկանց և հասարակական միջավայրի փոխհարաբերությունների հիմնախնդիր-

5 **L. Febvre**, *La Terre et l'évolution humaine. Introduction géographique à l'histoire. Avec le concours de Lionel Battailon*. Paris, 1922. Rééd. Paris, 1970 .

6 Տե՛ս **Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia**, *Les courants historiques en France (19<sup>e</sup>-20<sup>e</sup> siècle)*, Paris, 2005, p. 119.

7 Տե՛ս **F. Dosse**, *op. cit.*, p. 74.,

8 **L. Febvre**, *La Terre et l'évolution humaine ...*, p. 257.

9 **Ibid.**

10 **F. Dosse**, *op.cit.*, p. 78.

11 **L. Febvre**, *Un Destin. Martin Luther*, Paris, Presses Universitaires de France, 1928. Rééd. Paris, 1988.

12 **L. Febvre**, *Le problème de l'incroyance au XVI<sup>e</sup> siècle. La religion de Rabelais, L'évolution de l'humanité*, Paris, Albin Michel, 1942, Rééd., 1968.

ներին՝ Ռաբլեի ստեղծագործության և կենսագրության, մասնավորապես՝ հավատի և անհավատության համատեքստում:

Դրանցում Լ. Ֆերը մեկնարկում էր Ա. Բերի «պատմությունը հոգեբանություն է» դրույթից՝ հակադրվելով մարդու (կամ մարդկային հանրույթի) վերաբերյալ մեկուսի ընկալմանը: Մտակեցվածքային և հոգեբանական աշխարհների համադրական վերլուծություն իրականացնելու նպատակով նա իր սևեռումի կենտրոնում պահում էր անհատականության հիմնախնդիրը: Մ. Լյութերի և Ֆ. Ռաբլեի<sup>13</sup> հոգեբանությունը Լ. Ֆերը համադրում էր XVI դարի մտակեցվածքի հետ, փորձում պարզել այն միջավայրը, այն բանական մթնոլորտը, ուր կայացել է նրանց աշխարհատեսությունը, քանզի «Յուրաքանչյուր դարաշրջան բանականորեն արարում է աշխարհի իր սեփական պատկերը»<sup>14</sup>: Վեր էր հանվում այդ ժամանակների համակեցական կյանքը և մարդկանց մտածողությունը, որոնք բոլորովին այլ են եղել: Նա ձգտում էր XVI դարը կարդալ ոչ «20-րդ դարի մարդու», այլ XVI դարի մարդու աչքերով<sup>15</sup>: Ակնհայտ էր դառնում, որ մտակեցվածքի տիրույթում հանդիպում և համադրվում են պատմության անհատական և կոլեկտիվ ձգտումները: Ուստի Լ. Ֆերի հետազոտությունը սուսկ Մ. Լյութերի կենսագրությունը չէր, այլ «մարդու և հանրույթի միջև առկա փոխհարաբերությունների հիմնախնդրի քննարկումը»<sup>16</sup>: Նրա հետազոտությունը դուրս էր գալիս քաղաքական պատմության ավանդական սահմաններից՝ լրացուցիչ խորություն հաղորդելով պատմական ընկալմանը<sup>17</sup>:

Այս մենագրությունների մեջ Լ. Ֆերը լուծել է հիմնական երկու խնդիր. առաջին՝ ցույց է տվել տարբեր դարաշրջանների մարդկանց մտակեցվածքների տարբերությունը և երկրորդ՝ մտակեցվածքների և ընկերային կյանքի բարդ փոխհարաբերությունները: Այս առումով Լ. Ֆերը պատմագիտական հետազոտության տիրույթ ներբերեց «մտակեցվածքային փաստերը» քաղաքակրթությունների ընդլայն հետնախորքի վրա դիտարկելու խնդիրը:

Լ. Ֆերի տեսական-ընդհանրացնող միտքն ամփոփվել է նրա վերջին՝ «Մարտեր պատմության համար»<sup>18</sup> մենագրության մեջ: Դա տարիների ընթացքում կուտակված կարևոր հոդվածների ամփոփումն էր՝ բաղկացած

Այդ նույն ժամանակ ռուս բանասեր Մ.Բախտինը, նույնպես մեկնարկելով զանգվածային գիտակցության հիմնախնդրից, առաջադրել է հումանիտար հետազոտության մեկ այլ՝ կառնավալային ծիծաղի մշակույթի ուղղությունը: Մ. Բախտինի՝ Ռաբլեի վերաբերյալ հետազոտության մեջ նորովի են վերարժևորվել այդ մշակույթի խորքային շերտերը: Նման մոտեցումը հարցականի տակ էր դնում ողջ ընտրանու «լուրջ» մշակույթի հիմնարար արժեքները՝ վերակերպելով և հարաբերականացնելով դրանք: Մ.Բախտինը ծանոթ էր Լ.Ֆերի հիշյալ աշխատությանը: Տե՛ս Մ. Մ. Бахтин, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, М., 1966.

14 Լ. Febvre, Le problème de l'incroyance..., p. 2.

15 G. Bourde, H.Martin, Les Écoles historiques, Paris, 1997, p. 221.

16 P. Burke, op.cit., p. 21.

17 Տե՛ս Պ. Рикёр, Память, история, забвение / Пер. с фр. И. И. Блауберг и др. — М.: Изд-во гуманитарной литературы, с. 267.

18 Լ. Febvre, *Combats pour l'histoire*. Bibliographie choisée et méthodique, Paris, Armand Colin, 1953. Հետմահու՝ 1962 թվականին, հրատարակվում է նաև նրա «Հանուն ամբողջական պատմության» խորագրով հոդվածների մեկ այլ ժողովածու՝ Լ. Febvre, *Pour une histoire à part entière*, Paris, SEVPEN, 1962.

«Նախ և առաջ դավանանքներ», «Հանուն և ընդդեմ», «Դաշինքներ և հե- նարաններ», «Մերձավորների կամ ընկերների հայացքները, որոնք անգի- տանում են միմյանց» և «Պատկերներ և հիշողություններ» բաժիններից: Ընդ որում՝ հոդվածների այս ժողովածուի մեջ հետևողականորեն համա- կարգված և ի մի է բերված մարդկային համակեցության զանազան շեր- տերը համընդգրկունորեն տեսնելու ֆևրյան հայեցակարգը (լեզվաբա- նություն, հոգեբանություն, գրականություն, փիլիսոփայություն, արվեստ, գիտություն և այլն):

Ժողովածուի մեջ առաջադրված բազմաթիվ հարացույցների և հայեցակարգերի մեջ ուրույն տեղ ունի «կոլեկտիվ պատմագրության» հղացքը՝ ամփոփված «**Հանուն պատմության ուղղորդման: Կոլեկտիվ հետազոտությունները և պատմության ապագան**» հոդվածում: Մի քանի էջանոց այս հոդվածում համադրված են ներքուստ ներհակ՝ «կոլեկտիվ պատմագրություն» և «պատմական փաստ» հղացքները:

Նկատենք, որ մինչ Աննալների դպրոցի կայացումը, պատմագիտության մեջ գերակայող էր փաստերի և դրանց աղերսների ուղղակի բացահայտ- ման նպատակը, որը, սակայն, միտված չէր «կոլեկտիվ պատմագրության»: Ուստի «կոլեկտիվ պատմագրության» և «պատմական փաստի» համադ- րումն ու վերլուծությունն իրականացնելու համար Լ. Ֆևրը հետազոտու- թյան կենտրոնում դնում է միջգիտակարգային հայեցակարգը, համաձայն որի՝ «Գիտությունը փոշոսկրե աշտարակում ժամանակից և տարածությու- նից դուրս, զուտ մտավոր կյանքով ապրող անպտուղ (*desincarnes*) գիտնա- կանների մասնավոր և գաղտնի գործողությունների մեջ չէ»<sup>19</sup>: Ընդ որում՝ «Այն անտարանջատելի է սոցիալական միջավայրից, որտեղ մշակվում է: Այն ենթարկվում է ճնշման, բռնադատման բազմաթիվ պատահարներից (*contingences*), որոնք ազդում են նրա զարգացման վրա»<sup>20</sup>: Այս համա- պատկերում պատմագետը կանգնում է բարդ խնդրի առաջ՝ պատմական փաստերի բազմազանությունից արտածել գիտախնդրի լուծման հեռա- նկարը: Այլ կերպ ասած՝ «պատմական փաստն» արդեն ըմբռնվում է իբրև կառույց, «ինչպես ինքնին «տեսակետները» կառույցներ են, որոնցից մտադիր ենք օգտվել այս կամ այն տեսության ստուգման կամ ապացույց- ման համար»: Այս կապակցությամբ Լ. Ֆևրն առաջարկում է. «**Մեկընդմիջ ա- ձերբազատվենք Ռանկեի պարզունակ ռեալիզմից, որը երևակայում է, թե կարող է ճանաչել փաստերն ինքնրստինքյան, «ինչպես դրանք եղել են իրականում»**»<sup>21</sup>:

«Պատմական փաստի» վերանայման և «միջգիտակարգային մեթոդի» ներմուծման համապատկերում միայն հնարավոր կլինի կյանքի կոչել «կոլեկտիվ պատմագրությունը», որն ի զորու է ստեղծելու «գիտելիքի նոր հարացույց»: Եվ պատմագիտական նման հեռանկարում է, որ ընդլայնվում է նաև «հետազոտական ծրագրի» ըմբռնումը, որտեղ «Համակարգման նախագիծը հույժ էական է: Եվ [հարկավ] համագործակցությունը: Դրանով

19 L. Febvre, Pour une Histoire Dirigée: Les recherches collectives et l'avenir de l'histoire; in L. Febvre, Combats pour l'histoire, Paris, Armand Colin, 1952, p. 56.

20 Ibidem.

21 Ibid., p. 58.

ենք մենք միավորում «կոլեկտիվ հետազոտությունները», որոնք երբեք դուրս չենք թողել տեսադաշտից»<sup>22</sup>: Այստեղից էլ հրամայականը. «Եվ եթե ուզում ենք արագացնել այդ ժամանակների գալուստը (և դա պետք է), [ապա] մեր առաջնային խնդիրն է այլոց հետ խորհրդակցելը: Տեղյակ լինել և այլոց ձեռքբերումներին: Հենվել նրանց աջակցության վրա, ովքեր իրենց ուրրտում արդեն կազմակերպել են «կոլեկտիվ հետազոտություններ»<sup>23</sup>:

Ընդհանրացնելով՝ ասենք, որ շնորհիվ Աննալների դպրոցի հիմնադիր-ուսուցիչների՝ Լ. Ֆերի և Մ. Բյուկի պատմատեսական համակարգն իր «բանական շրջաբեկմամբ» դարձավ 20-րդ դարի պատմագիտական առաջատար ուղղություններից մեկը: Նրանց հաջողվեց աննախադեպ ընդլայնել պատմագիտության հետազոտության տարածքը: Եվ այս ամենը՝ շնորհիվ նոր մեթոդական լուծումների և սկզբնաղբյուրների նորովի ընթերցման<sup>24</sup>:

Սմբատ Խ. Հովհաննիսյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

\* \* \*

Կոլեկտիվ հետազոտությունները բանաձև են կամ, եթե ուզում եք՝ ծրագիր, որը չի կարող զարմացնել կամ շփոթեցնել (choquer) ո՛չ կենսաբաններին, ո՛չ ֆիզիոլոգներին, ո՛չ էլ հոգեբաններին, անգամ մեզանից ոչ հեռու «մարդկային» աշխարհագրագետներին, մարդաշխարհագրագետներին (anthropogéographe), ովքեր հոժարությամբ են դիմում «հետաքննությանը»: Բայց փաստ է, որ պատմության նկատմամբ կիրառելու դեպքում, այսօր այնպիսի երկրում, ինչպիսին է Ֆրանսիան, այն զարմացնում և շփոթեցնում է իրենց պատմաբան համարողների մեծ մասին: [Ուստի] մինչ մեկնաբանելը հարկ է հասկանալ այդ փաստը:

Կարող ենք հղում կատարել ավանդույթին: Երբ ես սկսեցի զբաղվել պատմությամբ<sup>25</sup>, այնժամ, երբ ծնվում էր ինքը՝ 20-րդ դարը, Կլիոյի ձեռնարկության (firme) մեջ նորաձևությունը, հարկավ, կոլեկտիվ աշխատանքը չէր: Դեռ բավարարում էին հին դիվանապահների (archivistes) ապշեցուցիչ պատմությունները, ովքեր իրենց գտած փաստաթղթերը թաքցնում և անհետացնում էին տարիներ շարունակ՝ պահուստավորելով հավանական օգտագործման համար: Ժամանակ առ ժամանակ պատմությունը փշրվում էր կատարելապես զավեշտալի «նախապատվության»։ պատահում էր՝ տազնապով վկա էինք լինում նույն ֆոնդերում (fonds) աշխատող երկու պատմաբանների արագության պայքարին, ովքեր իրենց ողջ «շոգիով»

22 *Ibidem.*

23 *Ibid.*, p. 60.

24 Թարգմանությունը կատարվել է Լ. Ֆերի «Մարտեր պատմության համար» գրքից՝ **L. Febvre**, Pour une Histoire Dirigée: Les recherches collectives et l'avenir de l'histoire; in **L. Febvre**, Combats pour l'histoire, Paris, Armand Colin, 1952, pp. 55-60.

25 Բառացիորեն՝ «երբ ես ծնվեցի պատմության մեջ» - ծանոթ. թարգմանչի:

(այն ժամանակների փոխաբերությունը, երբ մեքենա չկար) ճգնում էին հաղթականորեն առաջ անցնել միմյանցից: Մանկական անհատապաշտություն: Այն, ինչը ներմուծվում էր, պատմություն չէր, գիտություն, որը պետք էր խթանել: Դա պատմաբանն էր, ով գրքեր էր ստորագրում: Հեղինակային սնամասություն:

Ես այդքան միամիտ չեմ չնտածելու, որ բանականության այդ կացությունը, հարկավ, մի քիչ մեղմ, դեռ առկա է: Բայց այն արդյունք է, այլ ոչ պատճառ: Այն բխում է զուտ տրամաբանության ընդդիմակիցների ամուր համոզմունքներից, բայց որն ի վերջո միավորվում է: Ոմանք համոզված են, որ պատմությունը «գիտություն չէ»: Ոմանց համոզմամբ էլ պատմությունը, լինելով գիտություն, պատմագետին արգելում է, «բնականաբար», տարրերի ցանկացած ընտրություն, գաղափարների ցանկացած ընդմիջարկում (վարկածների կամ նույնիսկ տեսությունների տեսքով)՝ անմշակ փաստաթղթերի հավաքման և ընթերցողին փոխանցման ընթացքում: [Այստեղ] չենք պատրաստվում քննարկել այդ հակասական հղացքները:

Պատմաբանների շրջանակներում դրանց անփոփոխ հաջողության պատճառը բացատրվում է մի կողմից՝ համերաշխության (solidarité) չիմացությամբ, որը միմյանց է կապակցում (ուզենք, թե չուզենք) բոլոր գիտակրթանքները (disciplines), իսկ մյուս կողմից՝ բարեշրջության կամ հեղափոխության բացարձակ և անխռով անգիտացմամբ, որն այժմ տեղի է ունենում «գիտնականների» կորպորացիաների գաղափարներում և որն ընդունված է անվանել գիտական օբյեկտիվություն:

Միով բանիվ՝ ուղղակի նշենք. ո՛չ: Գիտությունը փղոսկրե աշտարակում ժամանակից և տարածությունից դուրս, զուտ մտավոր կյանքով ապրող անպտուղ (désincarnés) գիտնականների մասնավոր և գաղտնի գործողությունների մեջ չէ:

Գիտությունը, և ես նկատի ունեմ [ողջ] Գիտական Հանրայթը, իրականացվում է իր դարաշրջանի միջավայրում թաթախված մարդկանց կողմից: Նույնը՝ մաթեմատիկոսների, ֆիզիկոսների, կենսաբանների ... և պատմաբանների [վերաբերյալ]. նույնը տարածվում է և բոլոր մյուսների վրա, շնորհիվ որի նրանց գիտական գործունեությունը շաղկապվում է տվյալ դարաշրջանի բոլոր մյուս գործողությունների համակազմին<sup>26</sup>:

Այլոքեն ասած՝ Գիտությունը կայսրություն չէ կայսրության մեջ: Այն անտարանջատելի է սոցիալական միջավայրից, որտեղ մշակվում է: Այն ենթարկվում է ճնշման, բռնադատման բազմաթիվ պատահարներից (contingences), որոնք ազդում են իր զարգացման վրա: Եվ ահա թե ինչու, ի դեպ, Գիտության պատմությունը շատ հեռու է մեռած տեսությունների և ժամկետանց մեկնությունների մռայլ և փոշոտ պահեստարան հիմնելուց: Ճիշտ հակառակը՝ ներկայացնում է մարդկային մտքի կենդանի համընդհանուր պատմության մի գլուխ. այն վերջին հաշվով վերապատմում է

26 Այս մասին, բացի Միջազգային համադրական շաբաթների (Semaines Internationales de Synthèse), մասնավորապես՝ «Գիտություն և օրենք» (Science et Loi) թեմայի զեկույցներից (5e semaine; Paris, Alcan, 1934, in-12), տես «Մարքսիզմի լույսի ներքո» (A la lumière du marxisme, Paris, E. S. I., 1935, in-8°) հետաքրքիր կոլեկտիվ աշխատանքը, ինչպես նաև իմ դատողություններն այս թեմայով՝ *Febvre L.* « Un débat de méthode: Techniques, Sciences et Marxisme », (*Annales d'Histoire Économique et Sociale*, 1935 p. 615-623.



հոգու ընտելացումը նյութին, իրենց կենսամիջավայրի վրա մարդկանց տիրապետության հաստատումը:

Այսու՝ եթե առաջիկա երկու տասնամյակներում բոլոր բնական գիտությունները ենթարկվեն իսկական գաղափարական հեղափոխության արդյունքներին, եթե նրանք տեսնեն ֆիզիկայի հանկարծական ու անկանխատեսելի զարգացման ներգործությամբ խարխլվող բոլոր տեսական կառույցները, որոնք գիտնականների ողջ սերունդների կողմից մշակվել են հընթացս 17-րդ, 18-րդ, 19-րդ դարերի, եթե կոնկրետը փշրի վերացականի շրջանակները, աշխարհը «ռացիոնալ» մեխանիկայով մեկնաբանելու փորձը կտրուկ անհաջողությամբ ավարտվի, եթե հարկ լինի վերանայել գիտական հասկացությունների ողջ համախումբը, որոնց հիման վրա ցայժմ ապրել են, եթե ոչ մի էական տարր վերջին հաշվով չխուսափի այդ վերանայումից՝ ո՛չ գիտական փաստի, ո՛չ օրենքի, ո՛չ անհրաժեշտության, ո՛չ պատահականության, ո՛չ էլ ինքնին գիտությունների և ընդհանրապես Գիտության հասկացությունները..., Գիտության, որն իր օբյեկտը գիտնականների անհողդողդ և լուրջ միջամտության վրա է կառուցում, պատմությունը չի կարող անմասն մնալ այդ ցնցումներից: Ուզի, թե չուզի, այն ներգրավված է այնտեղ: Ապավինելով դարի հին «գիտական» գաղափարների ողջ ուղեբեռին և այսօր բոլորովին մերժված «գիտնականներին», որոնցից նա վերջերս փոխառում էր, և համառելով՝ պատմությունը ծիծաղելի է դառնում: Եվ եթե ճիշտ է, որ բոլոր գիտությունները համապատասխանատու են (solidaires), պատմությունը ծիծաղելի է դառնում հենց այնպես՝ հանուն հաճույքի:

Արդ, ի՞նչ են մեզ ուսուցանում այդ համապատասխանատու գիտությունները, որոնց օրինակը պետք է ծանրաբեռնվի պատմության վրա: Բավականին շատ բան, բայց հատկապես, որ յուրաքանչյուր գիտական փաստ «հորինված», այլ ոչ թե հում վիճակով է տրված գիտնականին: Որ ամբողջովին վերանայման են [ենթակա] հայեցողության՝ իբրև իրականության լուսանկարի, և փորձի՝ իբրև իրականությանը միջամտելու, տարբերությունների հին պատկերացումները: Որ ոչ մի դեպքում հայեցողությունը ոչինչ չի հրամցնում հում [վիճակում]: Որ այն կառույց է, ինչպես ինքնին «տեսակետները» կառույցներ են, որոնցից մտադիր ենք օգտվել այս կամ այն տեսության ստուգման կամ ապացուցման համար: Որ, հետևաբար, անիրական է այդքան հաճախ կրկնվող «պատմագետը փաստերն ընտրելու իրավունք չունի» առարկումը, քանի որ փաստացիորեն ցանկացած գիտնական, ով էլ որ նա լինի, մշտապես ընտրում է (և, բացի այդ, ողջ պատմությունն արդեն ընտրություն է) պատահականության միակ փաստը, որը ոչնչացնում է այս կամ այն վկայությունը, անցյալի այս կամ այն հետքը, այս կամ այն փաստաթղթերի համախումբը և պահպանում այլերը: Վերջապես, կառչել գիտական աշխատանքների իսկական արժեքների վերաբերյալ հին նախապաշարմունքներից, նշանակում է գնալ ինքնին պատմության ներքնակողմը (intérieure), փաստերը «հենց այնպես», հանուն հաճույքի հավաքելու անհեթեթ և պարզունակ (naïve) հավատը՝ գալիք հանձարի սպասումով, ով կկարողանա դրանց տիրապետել, ինչն աստվածահաճ գործ է: [Ինչպես նաև], խոսելով պատմության ու հարակից

ՀԱՎԵԼՎԱԾ

Դ (Ժ) ԳՄԻԿ 4 (40) Խոկմաներ-դեկտեմբեր, 2012

ՎԷՄ համահայկական հանդես

գիտությունների հաշվետվության մասին, [հանգել] այն տեսությանը, որը մի ժամանակ այնքան թանկ էր ընկերաբանների (և բացի այդ այնքան նպաստավոր նրանց հավակնությունների) համար, ըստ որի պատմագետը սևագործ բանվոր է՝ դատապարտված քարհանքից դուրս կորզելու և հղկելու քարերը, որոնք միայն ընկերաբան-ձարտարապետը կգա հավաքելու...

Մեկընդմիջտ ձերբագատվենք Ռանկեի պարզունակ ռեալիզմից, որը երևակայում է, թե կարող է ճանաչել փաստերն ինքնուրուիքյան, «ինչպես դրանք եղել են իրականում»: Եվ դա [իբր] հատանցում է մեր հոգեկերպի միջով, ուր մենք տեսանում ենք «պատմական իրականությունն» իբրև ֆիզիկական իրականություն: Եվ մեկ ուրիշով փորձենք փոխարինել պատմական աշխատանքի հին տարբերակումը, ավանդական սխեման (վերականգնել փաստերը, ապա կենսագործել), որը միաժամանակ ուշադրություն է դարձնում թե արդի տեխնիկային, թե գալիք պրակտիկային, ինչպիսին այն արդեն ծանուցվում է: Պատմաբանը չպետք է մտածի տրամաբանորեն, [այլ պետք է] հոգ տանի պարզից դեպի բարդը հաջորդաբար, աստիճանակարգորեն բարձրանալու [մասին] և աստիճան առ աստիճան վերականգնի սանդուղքը, որը տանում է պարզագույն խնդրից բարդագույնին: Կարգը, որն այստեղ առաջադրվում է, ծագումնաբանական (*génétique*) կարգն է: Եվ այս դիտանկյունից նախ և առաջ կարևոր է տևական և ընդգրկունորեն մտածված հետազոտական ծրագրերի գոյությունը, հորինումն (*confection*) ու մշտական թարմացումը (*la mise à jour*)<sup>27</sup>:

Ուստի «ձեր պատմության հիմքում ընկած են «տեսությունները»» հարցման մեջ չեմ գտնում ոչինչ մերժելի: Վերջերս կարդացի հետևյալ վնասակար միտքը. «Տեսությունը մտածական կառույց է, որը, ի պատասխան մեր հասկանալու բնական և տիրական պահանջներին, կոչված է մեզ օժանդակելու փաստերը բացատրելիս: Ըստ այդմ այն ինքնին Գիտության արտահայտությունն է ..., որի նպատակը վերջնական օրենքներ բացահայտելը չէ ..., այլ ֆենոմենների ըմբռնումը»: Ո՞վ է այդ կասկածելի մետաֆիզիկը: Կենսաբան Էյթոնին է, ով հղում է անում մեկ այլ կենսաբանի՝ Ֆրեյդոնյին<sup>28</sup>:

Ամիշտ անցել են ժամանակները, որոնց մասին հիշատակում էր Լուի Լապիքը (*Louis Lapicque*)<sup>29</sup>, և այն թափառող հնավաճառի գոյությունը, որը նկարագրում է Մաժանդին (*Magendie*). «Ես շրջում եմ անդ ներսում հանց հնավաճառ և յուրաքանչյուր քայլի գտնում հետաքրքիր ինչ-որ բան, որ կարելի է դնել պարկիս մեջ»: «Անդ ներսում»-ը կենդանի մարմնի լաբիրինթոսն է: «Անդ ներսում»-ը պատմագետների մեծ մասի համար, անգամ այսօր, նշանակում է կենդանի Պատմության լաբիրինթոս... Բայց Մաժանդի խոսքին Լապիքը հակադրում է Դաստրի [խոսքը] (հիշենք այն և մենք՝ պատմագետներս), [իսկ] «Գիտությունը» մեզ հավաստիացնում է. «Երբ չգիտես, թե ինչ ես փնտրում, չես էլ հասկանա, թե ինչ ես գտել»:

27 Տե՛ս **L. Febvre**, *Examen de conscience d'une histoire et d'un historien*, in **L. Febvre**, *Combats pour l'histoire*, Paris, Armand Colin, 1952, p. 3.

28 **Ch. Fraipont**, *Adaptations et mutations*, Paris, Hermann, 1932, in-8°.

29 **Lapicque L.**, *L'orientation actuelle de la physiologie (R. Philosophique, 1930, n° 9-10)*.

Այն, ինչը հարկավոր է կենսաբանին, ինչը նրա համար իմաստնությունն է և ողջամտությունն է, կարող է պատմագետի համար անմտությունն է և հիմարություն համարվել: Ինչպես նա, ով ջանում է աշխատել բոլոր առարկաներից բարդագույնի՝ մարդկանց պատմական գործունեության վրա, կհամաձայնի նետվել ավելի երկարատև արկածների մեջ՝ առանց կողմնացույցի, միայնակ, և աղերսել Պատահականությանը, ինչպես աստծուն: Դեռ այսօր էլ պատմության տիրույթում ով ասես, որտեղ պատահի տեղակայում է, և ցանկացած նյութերով, ցանկացած ուղղությամբ կառուցում է իր երևակայության (fantaisie) մեջ պատի իր կտորը՝ ոմանց մոտ քիչ ավելի մեծ, մյուսների մոտ քիչ ավելի փոքր: Իսկ հետո, լվանալով ձեռքերը, լրացականչում]. «Ինչքան շատ բան է արված գալիք Պալատի համար»: Բաց ոչ: Ոչինչ իրականում [արված չէ]: Երբ ցանկանում են պալատ կառուցել, հրավիրում են ճարտարապետին, ով կկազմի իր նախագիծը: Եվ առաջին հերթին մաքրում են շինհրապարակը ավելորդ շինություններից, որոնցով լեվի-լեցուն է տեղանքը: [Այսու] մենք կսկսենք ամենասկզբից՝ ճարտարապետական նախագծերից<sup>30</sup>:

Համակարգման նախագիծը հույժ էական է: Եվ [հարկավ], համագործակցությունը: Դրանով մենք միավորում ենք «կոլեկտիվ հետազոտությունները», որոնք երբեք դուրս չենք թողել տեսադաշտից: Ունիվերսալիզմի ժամանակներն անցել են: Ամենուր, բոլոր բնագավառներում: Մեզ ասում են. «Ժիառը անթերի բնապաշտներից (naturalistes) վերջինն էր»: Մեզ ասում են. «Սիլվեն Լևին (Sylvain Lévi) անթերի հնդկագետներից վերջինն էր»: Հարկավ: Դրանից ինչ դասեր քաղել: Որ Ալեքսանդրը մահացել է, նրա կայսրությունը մասնատվել է: Ուզում եմ ասել, որ դա տեղի կունենա մարդկանց կողմից, ովքեր կլինեն վիթխարի կայսրության միայն մի մասի տիրակալը, որը Սիլվեն Լևին դեռ կարող էր տիրապետել և կառավարել ամբողջությամբ: Բայց արդո՞ք սա միակ հնարավոր եզրահանգումն է: Ես անձամբ տեսնում եմ և ուրիշը:

Նեղացնել գիտնականի հետազոտական տիրույթը նշանակում է ուժեղացնել «մասնագիտությունը», դարձնել այն անդարմանելի աղետ: Իսկ եթե Ալեքսանդրի ժառանգին թողնեն իր ողջ կայսրության կառավարումը, բայց պարտավորեցնեն նրան համագործակցել հինգ-վեց մարդկանց՝ գորահրամանատարի, դիվանագետի, գանձապետի, ճարտարապետի հետ, որոնց համագործակցությունը նա միայն պետք է կազմակերպի, կարգավորի աշխատանքն ու սահմանի գործը:

[Արդ] վերափոխենք կարգը. ինչ կլինի, եթե պատմագետն ինքը, բավարարվելով վերջինիս դերով, կատարի ողջ ցուցումը. նախ և առաջ՝

30 Թող թույլ տրվի ինձ առանց գոռոզամտության հիշատակել, որ «Փրանսիական հանրագիտարանը» (ինչպես ես էի մտահղացել՝ Հիմնախնդիրների հանրագիտարանը, այլ ոչ թե հղումների) երբևէ ձեռնարկված ամենամեծ փորձն է մինչ օրս որևէ երկրում, որը միայնաց մերձեցնում և անմիջական կապեր է հաստատում ոչ թե տաղանդավոր հանրամատչելի դարձնողների (vulgarisateurs), այլ ինքնին հետազոտողների, Գիտության բոլոր բնագավառների «արարիչների» միջև, մարդիկ, ովքեր գտնվում են մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանական և այլ հետազոտությունների առաջնամասում, վերցնում են իրենց գաղափարները ոչ թե ձառերից (traites) ու դասագրքերից, այլ ընդդեմ անհայտի անողորք և ամենօրյա մարտերի ընթացքում, որի արդյունքում յուրաքանչյուր օր նրանք ավելի ու ավելի խորն են ներթափանցում:

կառուցի իր սեփական գործը, ապա կազմի դրա մասերը, իսկ վերջում դրանք հավաքի և գործառնությունի: Եթե՛նա, ընդունելի կշռադատումների համաձայն, ընտրի հետազոտության թեման (sujet), խնամքով այն նեղացնի, նշի այն, ինչը նախ և առաջ կարևոր է հաստատել (ինչպես հարկ է, հրաժարվել մանկական գաղափարներից, որոնք հավասարապես հետաքրքիր են բոլորի համար), [ապա] կազմակերպի հետազոտողների բարդ մի համախումբ (équipe), ասենք (մտածելով տեխնիկայի պատմության որոշ հնարավոր և ցանկալի հետազոտությունների մասին)՝ բառի բուն իմաստով [կազմված] տեխնիկներից (իր գիտության պատմությանը տեղյակ քիմիկոս, կոնկրետ մտածող տնտեսագետ): Եթե [իրեն] վերապահի ամենադժվար դերը՝ նախնական հարցաթերթիկներ կազմելը, ստացված պատասխանները միմյանց բաղդատելը՝ դրանից զատելով [հիմնախնդրի] լուծման տարրերը, կարգավորի հարցախույզների անհրաժեշտ հավելվածները և հատկապես որոշարկի հիմնախնդրի աղերսները՝ իր բանաձևած ժամանակի առաջադրած պատմական հիմնախնդիրների հետ: Եթե բռնի այդ երկար ուղին, որն ի վերջո ավելի կարճ է լինելու, քան նախկին հին մանվածապատ ուղիները, վերջապես կկարողանա պատմությունը դարձնել «հիմնախնդիրներ առաջադրող գիտություն» կամ միշտ վստահությամբ և առաջին հարվածով լուծող [գիտություն], [ապա], կարծում եմ, նրա դերը ավելին կլինի, քան է «անձնական» գրքերի անգործ արհեստագործի դերը: Ըստ իս ոչ ոք այլևս ինքն իրեն հարց չի տա՝ պատմությունը գիտություն է, թե՛ արվեստ: Կարծում եմ, որ կան այլևս պատմագետ չեն հորջորջի **Լուի 15-րդի կանանց և Բորջիաների թույների մասին** գիտական գրքերի հեղինակ գիտնականին, կան, այդուհետ, պատմագետը, թողնելով իրենց համար ստեղծված ակադեմիական մրցանակների հետ այդ ազնիվ մարդկանց և ինքնին անունը, որը նրանք անվանարկել էին, առանց տատանվելու կանվանափոխվի, որպեսզի այլևս չլինի ամոթալի և վերջին հաշվով՝ չափազանց անհեթեթ շփոթմունքի զոհը:

Եվ եթե ուզում ենք արագացնել այդ ժամանակների գալուստը (իսկ դա պետք է), [ապա] մեր առաջնային խնդիրն է այլոց հետ խորհրդակցելը: Տեղյակ լինել և այլոց ձեռքբերումներին: Հենվել նրանց աջակցության վրա, ովքեր իրենց ոլորտում արդեն կազմակերպել են «կոլեկտիվ հետազոտություններ»:

Ֆրանսերենից թարգմանեց՝  
*Սմբատ Խ. Հովհաննիսյանը*

## FOR DIRECTED HISTORY.

Collective researches and the future of history

(translation and preface by Smbat Kh. Hovhannisyanyan)